ցանել և տեղեկանալ ճշմարտութեան, ըստ պատուիրելոյ Եպարքոսին։ Ցանդիման լինիլ այլազգեացն այնոցիկ եւ 'ի հարցանել նոցա՝ ետուն պատասխանի եւ ասեն, ճշմարիտ է գիրն վկայութեան և մեք կնքեալ եմք մատանեօք մերովք. վանօրայք և տեղիքն յիշատակեալք 'ի գրի, են սեփհականութիւնք Հայոց, և ոչ ոք տիրեալ էր բաց 'ի նոցանէ՝ մինչեւ ցօրն, յորում բռնութեամբ եհան 'ի ձեռաց նոցա Թիւրք օղլու ճէլալի կոչեցեալ։ Եւ լուեալ պաշտօնէին զայսոսիկ բանս 'ի բերանոյ նոցա, խնդրեաց 'ի դատաւորէն 'ի գրի հարկանել զնոսա, որպէս յայտ արարին, և նորա գրեալ ետ ցնա. 'ի ١. Բէպիլ էվվէլ ամսոյ՝ ١.٧. (1659)։

Ցաւուրսն յայնոսիկ Բէօպրիւլիւ Մէհէմմէտ Եպարքոսն կարգեաց զորդի իւր զԱհմէտ 'ի Բդեշխութիւն Կարնոյ՝ հրամանաւ և հաճութեամբ Թագաւորին, եւ արար վասն այսր հանդէս մեծ 'ի Պրուսա առաջի Արքայի եւ ուրախութիւն ամենայն ժողովրդեան. և իբրեւ հանդերձեալ էր մեկնիլ Ահմէտ 'ի Պրուսայէ 'ի Կարին՝ յուղարկաւորեաց զնա հայր նորա Բէօպրիւլիւ, և Թագաւորն ընդ նմա երեւելի փառաւք։

Զայս ուրախութեան ժամ առիթ դիպող համարեալ Եղիազարու՝ եհաս փութանակի բաղում ընծայիւք յոտս մեծի Իշխանին՝ որ Վէզիր քիահեասի կոչի, և այլոց Իշխանաց, եւ աղերս արկեալ՝ խնդրէր միջնորդ լինել առ Եպարքոսն, զի դարձուսցէ վասն սիրոյ որդւոյ իւրոյ ըզվիճակն Հայոց՝ որ յԵրուսաղէմ, այն է վանք Ս. Յակոբայ, և այլ տեղիք։ Եւ նոքա գիւրաւ որսացին զսիրտ Եպարքոսին յայնմ պահու. և 'ի ծանուցանել նորա Արքայի՝ էլ հրաման զի կատարեսցին խնդիրք Հայոց։ Եւ յաւուրսն յայնոսիկ դարձեալ էր պաշտօնեայն յԵրուսաղէմէ, զոր առաքեալ էր Եպարքոսն վասն քննութեան հանրագրոյն այլազգեաց, զոր առեալ էին Աստուածատուր եւ Եղիազար, և զգիր դատաւորին մատոյց առ Եպարքոսն, յորում յայտ առնէր զքննութիւնս՝ եւ զամենայն տեղիս Հայոց նշանակեալ ուրոյն ուրոյն. ընթերցաւ այս գիր առաջի Արքային եւ յայտնի եղեւ նենգութիւնն Ցունաց։ Գրեցաւ հրովարտակ՝ յոր սկիզբն առնէ պատմել՝ զհանրագիրն՝